# Հանդիպել են Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարները

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախնական պայմանավորվածության համաձայն, դեկտեմբերի 15-ին հայ-նախիջեւանյան սահմանագծի Երասխի հատվածում կայացավ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակին, հրադադարի ռեժիմի ամրապնդմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հարցեր:

Պաշտպանության նախարարները պայմանավորվել են քայլեր ձեռնարկել սահմանային միջադեպերի բացառման, սահմանում կայուն իրավիճակի հաստատման ուղղությամբ: Որոշվել է երկու նախարարների միջեւ պահպանել օպերատիվ կապ՝ հնարավոր միջադեպերին արագ արձագանքելու եւ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով: Կարեւորվել է նաեւ սահմանային զորամասերի հրամանատարների միջեւ կապի՝ որպես սահմանային միջադեպերի կանխման միջոցի, հաստատումը: Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարները տվյալներ են փոխանակել ռազմագերիների վերաբերյալ, ճշտել նրանց հետ կապված այլ խնդիրներ: